В. Г. Тунян, Фальсификация истории восстановления армянской государственности в азербайджанской историографии, Ереван, Издательство ЕГУ, 2018, 396 с.

Վ. Գ. Թունյան, Հայկական պետականության վերականգնման պատմության կեղծումը ադրբեջանական պատմագրության մեջ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, 396 էջ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վալերի Թունյանի արժեքավոր մենագրությունը ներկայացնում է ադրբեջանական պատմագրության՝ 1918-1924 թթ. հայկական պետականության ձևավորման պատմության կեղծարարությունները: Հեղինակը դասակարգում է Կովկասի, մասնավորապես Հայաստանի պատմությանն առնչվող կեղծիքները, ցույց է տալիս, թե ժամանակի ընթացքում ինչպիսի փոփոխություններ են դրանք կրել, և ինչ նոր միտումներ են ի հայտ եկել: Պատմության կեղծարարությունը և պատմական փաստերի խեղաթյուրումը ադրբեջանական քարոզչամեքենայի կարևոր գործիքներն են, ուստի դրանց համալիր ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ներկայացնում ժամանակակից տեղեկատվական պատերազմի համատեքստում:

Ներկայումս Ադրբեջանը Հայաստանի Հանրապետության հետ առճակատման մեջ է միանգամայն տարբեր՝ քաղաքական, տնտեսական և քարոզչական ասպարեզներում, որոնցից յուրաքանչյուրն ունի իր նշանակությունը: Ի դեպ, քարոզչական պատերազմը բացահայտորեն ուղղորդում և հովանավորում են Ադրբեջանի իշխանությունները: Երկրի առաջին դեմքի շուրթերից բազիցս հնչել է, որ Երևանը, Զանգեզուրը և Սևանը անհրաժեշտ է «վերադարձնել»:

Հատկանշական է, որ Ադրբեջանում պետական մակարդակով հովանավորվող հակահայկական քարոզչության հիմնական նպատակներից է նաև հայկական հետքի բացառումը կովկասյան տարածաշրջանում: Գաղտնիք չէ, որ Ադրբեջանի իշխանությունները մեծ գումարներ են հատկացնում պատմական անցյալի խեղաթյուրման գործին՝ տարածաշրջանում իրենց «բնիկության» և հայերի «եկվորության» վերաբերյալ անհիմն թեզերն առաջադրելու և «հիմնավորելու» համար: Այդ համատեքստում առանձնակի կարևորվում է Վ. Թունյանի սույն մենագրությունը, որտեղ փաստական հարուստ նյութի հիման վրա համակողմանի ներկայացված են ուսումնասիրվող ժամանակաշրջանում ազերի «գիտնականների» միտումները:

Առաջին գլխում Վ. Թունյանը քննարկում է ադրբեջանական պատմագրության մեջ շրջանառվող՝ 1918-1920 թթ. Հայաստանի առաջին Հանրապետությանը վերաբերող քարոզչական թեզերը: Նա քննարկում է Հայաստանի անկախության հռչակումից առաջ և հետո տարածաշրջանի իրադրությանն առնչվող ադրբեջանական պատմագրության տարբերակը՝ հայկական մոտեցման համատեքստում: Նրա ներկայացրած աղյուսակային սխեմայի շնորհիվ (էջ 17, 22 և այլն) պարզ նշմարելի է դառնում ադրբեջանական պատմագրության մեջ ակտիվորեն շահարկվող կեղծարարության փաստը: Հեղինակը իրավացիորեն հանգում է հետևյալ եզրակացության. «Առաջին հանրապետության սահմանների ձևավորման վերաբերյալ առասպելների հետազոտությունը ցույց է տալիս դրանց խիստ քաղաքականացվածությունը, իրական պատմությունը խեղաթյուրելու ձգտումը և ի հայտ է բերում տարածքային կազմաձևման ոչ օբյեկտիվ տեկտոնիկան՝ թաքցնելով տարածաշրջանում «Մեծ Ադրբեջան» ստեղծելու միտումը» (էջ 40):

Վ. Թունյանը բացահայտում է Հայաստանի առաջին Հանրապետության իրավիճակի բարդությունը՝ ի դեմս տարբեր բաղկացուցիչներ պարունակող աշխարհաքաղաքական մենակատարության, ինչպիսիք են «Մեծ Ադրբեջանը», «Մուսուլմանական Կովկասը», «Վրացական նախագիծը», «Միացյալ Հայաստանը», Անդրկովկասյան ֆեդերացիան, տարբեր ձևերով Ադրբեջանի միությունը Թուրքիայի և Պարսկաստանի հետ: Նա գտնում է, որ 1918 թ. Հայաստանի Հանրապետության ստեղծումից ի վեր երկիրը գտնվում էր ժամանակագրական բախումների շրջապտույտում, որոնք պայմանավորված էին նրա անկախության նկատմամբ հարևան երկրների աշխարհաքաղաքական նկրտումներով: «1920 թ. սկզբին Անտանտը փաստացիորեն ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը,– գրում է նա,– սակայն նրա սահմանները հարևան երկրների հետ և Արևմտյան Հայաստանի ճակատագիրը մնացին անորոշ: Հայկական հարցի լուծումը տեղափոխվեց Անտանտ-Խորհրդային Ռուսաստան-քեմալական Թուրքիա աշխարհաքաղաքական հարթություն: Հայկական քաղաքական ռազմավարության օրակարգում միացյալ Հայաստանի ստեղծման խնդիրն էր, իսկ Արևմուտքի երկրները ձգտում էին ստեղծել աշխարհաքաղաքական նոր կենտրոն» (էջ 92-93):

Երկրորդ գլխում Վ. Թունյանը ներկայացնում է Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Հայաստանի առաջին Հանրապետությանը և տարածաշրջանային զարգացումներին առնչվող՝ ադրբեջանական պատմագրության մեջ շրջանառության մեջ դրված հիմնական կեղծ թեզերը: Նա քննության է առնում դրանց հեղինակների, այդ թվում՝ պատմական կեղծարարությունների հարուստ փորձ ունեցող Ա. Բալաևի, Ռ. Է. Իսմայիլովի, Ջ. Հասանլիի և այլոց աշխատությունները և իրավացիորեն արձանագրում. «Հայաստանի զավթողական ծրագրերին առնչվող առասպելը հակվում է դեպի այն թեզը, թե հայկական զինված ուժերը ներխուժել են Զանգեզուր, Ղարաբաղ և Ադրբեջանի հյուսիսարևելյան շրջաններ» (էջ 97):

Վ. Թունյանը անդրադառնում է նաև տարբեր պայմանագրերի կեղծարարությունների ուսումնասիրությանը, ցույց տալիս, որ ադրբեջանցի պատմաբանները կեղծում են 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի և Թիֆլիսի, ինչպես նաև 1920 թ. օգոստոսի 24-ի ռուս-թուրքական պայմանագրերի բովանդակությունները: Նրանք արհամարհում են Սևրի պայմանագրի և ղարաբաղյան խնդրի միջև կապը: Թիֆլիսի պայմանագիրը, որը կոչված էր Հայաստանի առաջին Հանրապետության և Ռուսաստանի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետության միջև հարաբերությունների կայունացմանը, նրանք դիտում են քեմալական Թուրքիայի նկատմամբ հայկական սպառնալիքի լույսի ներքո: Հեղինակը քննադատաբար ներկայացնում է նաև միայն ի հաշիվ հայկական հողերի՝ Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի, Ադրբեջանում խորհրդային իշխանության պահպանման հնարավորության առասպելը (էջ 203):

Մենագրության երրորդ գլուխը նվիրված է խորհրդա-քեմալական «մեզալյանսին» առնչվող առասպելների ուսումնասիրությանը: Այն ընդգրկում է Հայաստանի խորհրդայնացման շրջանի և դրան հաջորդող փուլերի վերաբերյալ կեղծարարությունների մանրակրկիտ քննարկումը: Հավատարիմ իր գործելաոճին՝ Վ. Թունյանը հստակ փաստերով և համակարգված ներկայացնում է ադրբեջանական խեղաթյուրումները և արձանագրում դրանց քարոզչական հետևանքները: Նա զուգահեռներ է անցկացնում Հայաստանի Հանրապետության խորհրդայնացման և հետխորհրդային հայկական պետականության առասպելագործության միջև: «Ադրբեջանցի պատմաբանների առասպելագործությունը Անդրկովկասում հայկական պետականության մասին՝ ցարական Ռուսաստանի անկումից հետո և ԽՍՀՄ-ի կազմավորման սկզբնական շրջանում,– գրում է նա,– իր հիմքում ունի ՌԽՖՍՀ-ի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև հայկական հողերի վերաբաժանման ծրագրերի և դիտավորությունների վերածննդի պատմական պատրանք: Անցյալի առասպելների հետադարձ հայացքը արդիականության վրա նպատակ ունի հիմնավորելու Ադրբեջանի՝ Հայաստանի Հանրապետության և հարևան պետությունների դեմ ուղղված ագրեսիվ արտաքին քաղաքականությունը» (էջ 379):

Վերջաբանը ներառում է հեղինակի կատարած աշխատանքի ընդհանրացումները: Ադրբեջանի պատմահոգեբանական պատերազմի համար առանձնացված են հասարակության մեջ այլատյացությունը, հայերի նկատմամբ դրական վերաբերմունքի արգելումը, պետական իշխանության կողմից հայատյացության քարոզչությունը բարձր մակարդակով, պատմական անցյալի հանդեպ հորինվածքները և այլն:

Մեզ իրավունք ենք վերապահում խորհուրդ տալ հեղինակին երբեմն խուսափել հուզական ձևակերպումներից, քանի որ հարուստ փաստերի հիման վրա շարադրված նրա մենագրությունը ունի օբյեկտիվ և հստակ եզրակացություններ ադրբեջանական պատմագրության բազմաթիվ կեղծարարությունների առնչությամբ:

Գրախոսվող գիրքը ունի պատմական և քաղաքագիտական կարևոր նշանակություն, ուստի այն կարող է օգտագործվել թեմատիկ դասավանդման համակարգերում, ինչպես նաև իբրև փաստագրական նյութ՝ տարբեր ոլորտներում գիտահետազոտական աշխատանքների իրականացման, մասնավորապես՝ ներկայիս քաղաքական գործընթացների վերլուծության և կանխատեսումների համար: Այն, անտարակույս, օգտակար է նաև ՀՀ համապատասխան պատկան մարմինների համար՝ ադրբեջանական քարոզչության դեմ մղվող քաղաքականություն մշակելու գործընթացում:

Վ. Թունյանի մենագրությունը գրված է մատչելի լեզվով, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն կարող է հետաքրքրություն ներկայացնել մեր հասարակության լայն շրջանակների համար: Այս ամենը վկայում է նրա գիտական բարձր մակարդակի, բարդ խնդիրների վերաբերյալ լուծումներ գտնելու և բազմակողմանի վերլուծություն իրականացնելու ունակության մասին:

ՏԱԹԵՎԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ներկայացվել է 09.09.2019
Ընդունվել է տպագրության 05.11.2019